

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝ «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ

Կազմակերպական-իրավական ձևը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)՝ ՀՀ, ք. Երևան, Աերացիա 1; հեռախոս՝ (+37410) 467410, 467989, 467990; ֆաքս՝ (+37410) 467400; ինտերնետային կայքը՝ www.valletta.am; էլ-փոստ՝ valletta@valletta.am

Հաշվետվության համարն ու ամսաթիվը՝ N11, 06.08.2008թ.

Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ անվանական արժեկտրոնային պարտատոմս

Արժեթղթերի քանակը՝ առաջին թողարկում՝ 7,000 (յոթ հազար) հատ

երկրորդ թողարկում՝ 10,000 (տասը հազար) հատ

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Շահեն Ստեփանյան</u> (անուն, ազգանուն)	<u>Տնօրեն</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>06.08.2008</u> (ամսաթիվ)
---	---------------------------	-------------------------	--------------------------------

<u>Արթուր Մարտիրոսյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>06.08.2008</u> (ամսաթիվ)
--	-------------------------------------	-------------------------	--------------------------------

Ստորագրությունները վավերացնում են՝

<u>Շահեն Ստեփանյան</u> (անուն, ազգանուն)	<u>Տնօրեն</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>06.08.2008</u> (ամսաթիվ)
---	---------------------------	-------------------------	--------------------------------

06 օգոստոսի 2008թ.

Կ.Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ դատավարությունների վերաբերյալ

ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից 18.03.2008թ. թիվ 1110400 ակտով «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Թողարկող/ նկատմամբ նշանակվել է տուգանք 138,123,600 դրամի չափով: Թողարկողի կողմից նշված գումարը ամբողջությամբ վճարվել է: Միաժամանակ, Թողարկողը թիվ 1110400 ակտն անվավեր ճանաչելու պահանջով հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանը 04.07.2008թ.ին կայացրել է վճիռ, համաձայն որի Թողարկողի հայցը բավարարվել է մասնակի՝ անվավեր է ճանաչվել ՀՀ ԿԱ ՀՊԾ 18.03.2008թ. թիվ 1110400 ակտը, բացառությամբ նշված ակտի վերջին պարբերությամբ /ակտի շարունակության էջ 1/ արձանագրված ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջները խախտելու համար 7,163,900 դրամի չափով առաջադրված գումարի մասի: Նշված մասով ակտն անվավեր ճանաչելու Թողարկողի պահանջը մերժվել է:

Նշված վճիռը օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարան: